«Հաստատում եմ»
Հայաստանի շախմատի ֆեդերացիայի
նախագահի առաջին տեղակալ՝ Ս. Լպուտյան
«26» «փետրվարի» 2026թ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի պատանիների առաջնության
կիսաեզրափակիչ մրցաշար

Կազմակերպիչ՝ Հայաստանի շախմատի ֆեդերացիա

Անցկացման վայր՝ Հայաստանի շախմատի ակադեմիա /հասցե՝ ք. Երևան, Շևչենկո 34/:

Ժամկետներ՝ 21-ից 29-ը մարտի 2026թ.

Ամսաթիվ	Խաղափուլ	Ժամ
21 մարտ	1-ին	12:00
22 մարտ	2-րդ	11:00
23 մարտ	3-րդ	11:00
24 մարտ	4-րդ	11:00
25 մարտ	5-րդ	11:00
26 մարտ	6-րդ	11:00
27 մարտ	7-րդ	11:00
28 մարտ	8-րդ	11:00
29 մարտ	9-րդ	11:00
Փակման արարողություն		16:00

Ժամակարգ՝ 90-ական րոպե մինչև պարտիայի ավարտը, յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:
Խաղի մեկնարկից 30 րոպեից ավել ուշացած մասնակցին կգրանցվի պարտություն և տվյալ մասնակիցը՝ որպես անհարգելի բացակա, կհեռացվի մրցաշարից:

Մասնակիցներ՝

Մրցաշարն անցկացվում է հետևյալ տարիքային խմբերով
ա) մինչև 8 տարեկան պատանիներ (2017թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ)
բ) մինչև 10 տարեկան պատանիներ (2015թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ)
գ) մինչև 12 տարեկան պատանիներ (2013թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ)
դ) մինչև 14 տարեկան պատանիներ (2011թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ)
ե) մինչև 16 տարեկան պատանիներ (2009թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ)
զ) մինչև 18 տարեկան պատանիներ (2007թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ)

Մրցաշարն անցկացվում է ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների համաձայն, շվեյցարական համակարգով, 9 խաղափուլով: «Զ» մրցաշարը (մինչև 18 տարեկան պատանիներ), մասնակիցների քիչ քանակի դեպքում հնարավոր է անցկացվի նաև շվեյցարական 7 խաղափուլով կամ շրջանային մրցակարգով:

Լրացուցիչ ցուցանիշներ՝

Հավասար միավորներ ունենալու դեպքում տեղերը կորոշվեն ըստ՝

1. Հատված բուխհոլցի
2. Բուխհոլցի
3. Հավասար միավոր ունեցող մասնակիցների միջև անձնական հանդիպումների արդյունքի
4. Սև գույնով խաղացած պարտիաների առավելագույն քանակի

Հայաստանի առաջնության ուղեգրեր- Հայաստանի պատանիների առաջնության եզրափակիչ փուլին մասնակցելու իրավունք կնվաճեն այն շախմատիստները, ովքեր իրենց տարիքային խմբերում կգրավեն հետևյալ տեղերը.

Պատանիներ	Մինչև 8	Մինչև 10	Մինչև 12	Մինչև 14	Մինչև 16	Մինչև 18
Տեղեր	12	11	10	7	6	3

- Խաղասրահ չի թույլատրվում ներկայանալ բջջային հեռախոսով, «smart» ժամացույցներով, ականջակալներով և այլ էլեկտրոնային տեխնիկական միջոցներով, հակառակ դեպքում խաղացողին կգրանցվի պարտություն:

Մրցաշարի ընթացքում մարզերը ներկայացնող մասնակիցների, ուղեկցող անձանց և մարզիչների ծախսերը (ճանապարհածախս, հյուրանոց, օրապահիկ) հոգում է գործուղող կազմակերպությունը: Առաջնության բժշկի սնունդի, մրցավարների սնունդի և գիշերակացի ֆինանսավորումը կատարվում է ԿԳՄՍ «Պետական աջակցություն մարզական ֆեդերացիաներին» ֆինանսական միջոցների հաշվին:

Մարզերի և Երևանի մարզադպրոցների հայտերն ուղարկել info@chessfed.am էլ. հասցեին՝ համաձայն սահմանված ձևաչափի: Երևանի ընտրական փուլում ուղեգրեր նվաճած մասնակիցների տվյալները ևս ներառել հայտերում:

Հայտերի ընդունման վերջնաժամկետն է մարտի 17-ը:

Հարցերի դեպքում զանգահարել՝ +374 10/99/ 440105

Գլխավոր մրցավար՝
Միջազգային մրցավար Գևորգ Մուրադյան